ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ПАЛАТА АУДИТОРОВ И ЭКСПЕРТ БУХГАЛТЕРОВ АРМЕНИИ
CHAMBER OF AUDITORS AND EXPERT ACCOUNTANTS OF ARMENIA

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/3, 6-րդ հարկ,
Հեռ.: 010 24-91-78; 077 24-91-78; 010 23-71-02; E-mail: info@caaa.am

Աուդիտորական գործունեության հանձնաժողով

Որակի կառավարման միջազգային ստանդարտ – ՈԿՄՍ 2

Կիրառելի է.

- 2022թ. դեկտեմբերի 15-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի կամ դիտարկման առաջադրանքների համար,
- 2022թ. դեկտեմբերի 15-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջաններին վերաբերող այլ հավաստման կամ հարակից ծառայությունների համար:

Կիրառելի է բոլոր այնպիսի առաջադրանքներում, որոնց համար առաքելության որակի հսկողությունը պարտադիր է, որոնք ներառում են.

- Ցուցակված ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ
- Այնպիսի աուդիտներ կամ այլ առաջադրանքներ, որոնց համար առաքելության որակի վերանայումը պահանջվում է տեղական օրենսդրությամբ,
- Այնպիսի աուդիտներ կամ այլ առաջադրանքներ, որոնց համար աուդիտորական ընկերությունը որոշում է, որ առաքելության որակի հսկողությունը պարտադիր է՝ որակի հետ կապված մեկ կամ մի քանի ռիսկերի արձագանքելու համար:

Աուդիտորական ընկերության պատասխանատվություն	Առաքելության որակի հսկողություն իրականացնող անձի պատասխանատվություն
Ընկերությունը պետք է սահմանի քաղաքականություն կամ ընթացակարգեր, որոնք՝ • պահանջում են, որպեսզի ընկերությունում նշանակվի համապատասխան հմտություններով, ունակություններով և լիազորություններով անձ կամ անձինք, ովքեր ունենան առաքելության որակի հսկողություն իրականացնող անձ նշանակելու պատասխանատվություն • պահանջում են, որպեսզի այդ անձը կամ անձինք նշանակեն առաքելության որակի հսկողություն իրականացնող անձ, որտեղ կա նման անհրաժեշտություն, • սահմանում են չափանիշներ՝ առաքելության որակի հսկողություն իրականացնող անձ ընտրելու համար:	Առաքելության որակի հսկողություն իրականացնող անձը՝ • չպետք է հանդիսանա առաքելության թիմի անդամ, • պետք է ունենա բավարար հմտություններ ու կարողություններ, այդ թվում նաև ժամանակ, որակի հսկողություն իրականացնելու համար, • պետք է համապատասխանի օրենսդրությամբ սահմանված պահանջներին, եթե կան նման պահանջներ՝ որակի հսկողություն իրականացնող անձ նշանակելու համար, • պետք է համապատասխանի էթիկական պահանջներին, ներառյալ օբյեկտիվությունն ու անկախությունը: Սա ներառում է նաև 2 տարվա «սառեցման» (քուլինգ-օֆֆ) դրույթը:

Անհատները, ովքեր օգնում են առաքելության որակի հսկողություն իրականացնող անձին

Առաքելության որակի հսկողություն իրականացնող անձիք կարող են իրենց թիմում ընդգրկել անհատների, ովքեր կօգնեն իրենց իրականացնելու հսկողություն իրականացնող անձի գործառույթները: Այս անհատները նույնպես չպետք է հանդիսանան առաջադրանքի թիմի անդամներ և.

- պետք է ունենան բավարար հմտություններ ու կարողություններ, այդ թվում՝ նաև ժամանակ, որակի հսկում իրականացնելու համար,
- պետք է համապատասխանեն էթիկական պահանջներին, ներառյալ օբյեկտիվությունն ու անկախությունը

Առաքելության որակի հսկողություն իրականացնող անձը պետք է՝

- իր վրա վերցնի առաքելության որակի հսկողության իրականացման ողջ պատասխանատվությունը,
- իրեն օգնող անձանց ուղղորդման ու վերահսկման պատասխանատվությունը՝ վերջիններիս աշխատանքների բնույթը, ժամկետներն ու չափը որոշելիս:

Առաքելության որակի հսկողության իրականացումը

Առաքելության որակի հսկողությունն իրականացնելիս առաքելության որակի հսկողություն իրականացնող անձը պետք է բավարարի հետևյալ պայմանները՝

- կարդա և հասկանա այն տեղեկատվությունը, որն իրեն է տրամադրվել՝
    - առաքելության թիմի կողմից, որը վերաբերում է առաքելության և հաճախորդի բնույթին և այլ հանգամանքների,
    - աուդիտորական ընկերության կողմից, որը վերաբերում է ընկերության մոնիթորինգի գործընթացին,
- քննարկի առաքելության թիմի հետ էական հարցերն ու նշանակալի դատողությունները, որոնք կիրառվել են առաքելության պլանավորման, իրականացման և հաշվետվությունների պատրաստման ժամանակ,
- ձեռքբերված տեղեկատվության հիման վրա, վերանայի առաքելության թիմի կողմից կիրառված նշանակալի դատողությունները և գնահատի՝
    - այդ նշանակալի դատողությունների հիմքերը, ինչպես նաև մասնագիտական կասկածամտության օգտագործումը, եթե կիրառելի է,
    - արդյոք եզրակացությունները բավարար չափով են փաստաթղթավորված,
- ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար, գնահատի, արդյոք առաքելության ղեկավարի այն որոշումը, որ էթիկական բոլոր նորմերը բավարարվել են, հիմնավորված է,
- գնահատի, արդյոք բարդ կամ տարընթերցվող հարցերի վերաբերյալ թիմը դիմել է անհրաժեշտ անձանց՝ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար, գնահատի այն հիմքերը, որոնցով առաքելության ղեկավարը որոշում է, արդյոք իր ներգրավվածությունը բավարար է առաքելության ընթացքում, ներառյալ նշանակալի դատողությունների ու եզրահանգումների հիմքերը,
- վերստուգի՝
    - ֆինանսական հաշվետվությունների աուդիտի դեպքում, ֆինանսական հաշվետվություններն ու աուդիտորի հաշվետվությունը, ներառյալ առանցքային հարցերը,
    - դիտարկման առաջադրանքների դեպքում, ֆինանսական հաշվետվություններն ու առաքելության հաշվետվությունը, կամ
    - այլ հավաստման կամ հարակից ծառայությունների դեպքում, առաքելության հաշվետվությունը, ինչպես նաև հավաստում պահանջող հարցի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ծանուցում տրամադրելու վերաբերյալ պատասխանատվություն

Առաքելության որակի հսկողություն իրականացնող անձը պետք է տրամադրի ծանուցում հետևյալ հանգամանքներում՝

Ծանուցում պահանջող հանգամանքներ	Ծանուցվող կողմ(եր)

Առաքելության որակի հսկողություն իրականացնող անձն այլևս իրավունք չունի իրականացնելու որակի վերահսկում	Ընկերության համապատասխան անձ(իք)
Առաքելության որակի հսկողություն իրականացնող անձին անհանգստացնող, սակայն չլուծված հարցեր	Առաջադրանքի ղեկավար և ընկերության համապատասխան անձ(իք)
Առաքելության որակի հսկողության ավարտ	Առաջադրանքի ղեկավար

Փաստաթղթավորման հետ կապված պահանջներ

Որակի հսկողության իրականացումը պետք է փաստաթղթավորվի այնպես, որ որևէ փորձառու հաշվապահ-մասնագետ, ով նախկինում չի առնչվել այս առաքելության հետ, կարողանա հասկանալ իրականացված ընթացակարգերի բնույթը, ժամկետն ու չափը, ինչպես նաև հսկողության արդյունքում կատարված եզրահանգումները:

Առաքելության որակի վերահսկման փաստաթղթավորման ձևը, բովանդակությունն ու չափը կարող են կախված լինել՝	Վերահսկման փաստաթղթավորումը ներառում է՝
• առաքելության բնույթից ու բարդությունից • առաքելության որակի հսկողության ենթակա հարցերի բնույթից ու բարդությունից • Առաքելությանը վերաբերող փաստաթղթերի չափից	• առաքելության որակի հսկողություն իրականացնող թիմի անդամների անունները • վերանայված փաստաթղթերի անվանումները • առաքելության ղեկավարին ներկայացված ծանուցում՝ առաքելության ավարտի, ինչպես նաև անհանգստացնող որևէ հարցերի վերաբերյալ • առաքելության որակի հսկողության ավարտի ամսաթիվը